



Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Ա Մ Ա Ն Ո Ր Ե Վ Ա Ռ Ի Ր Բ Շ Ն Ո Ւ Խ Դ

Ամանորի և Փրկչի հրաշափառ Ս. Ծննդան ստմերի խորհուրդը քրիստոնյա աշխարհի ուշաբրույրջունը հուզով, հավասով նորից իր փառ է թելում:

Նոր տարվա սեմին, այս սրբազն օրեւնին, մինչ աշխարհով մեկ նորից հնչում է գանձերի ավետավոր ղողաճը «և երկիր խաղաղութիւն, ի մարդկա հանութիւն», իրեւնինից օրիներգությանց դեռևս խառնում է աշխարհի որոշ մասերում թնդանութերի որոտը...

Բաց բոլոր հոգիների մեջ կա այն անյուրութ հավատը, թե ի վերջո կիալրանակն բարին, իրավունքը. «Ես խօսեմ զարյադութիւն և զիաւուն փրկութեան»:

Ամանոր է և Ս. Ծննդան:

Ժամանակի և կանքի մեծ խորհուրդների սահմանը կանգնել:

Ամանորի և Ս. Ծննդյան հանդիսադրութեան իմերի մեջ Աստծո, հալիտենականութան և հավերժի շոնչը կա: Քրիստութեանան եկեղեցին հավատով, լավատեսությանը ողջունում է Նոր տարին, արևածագը նոր երազների, նոր ապրումների, նոր գործունեութան, բարեմալթելով, որ «ժամուն և ժամանակա Արարիչը այս ամս ու գալոց է, խաղաղութեամբ և պարագայց ամօր պահնուց» (Տաթևացի): Ամանորը հավերժի մեկ պատկերն է մեր ապրումի և մտածումի մեջ:

Հին տարվա մարտամտին և նոր ժամանակների արշապույտին մարդկությունը սիրելի ստիրությունն է դարձել խորհրդածել ժամանակի և կանքի մատին, հանրագումարի թերել մեր կանքից խված օրերի հաշիվը և պատամանաւության խորուն զգացմունքը բանալ նոր կանքի, նոր հնարավորությունների մատյանը:

Ժամանակի գաղափարը մարդու հայտնագործությունն է՝ հիմնված մարդկային փորձառության վրա: Մարդն է ստեղծել ժամանակի գաղափարը և մարդն է տերը ժամանակի:

Ամանորը հալիտենական, անսկիզբ ու անվախճան ժամանակի սուն է մարդու վերանորոգված կյանքի մեջ, իսկ ամեն մի նոր մարդկային ծնունդը՝ հալիտենական կյանքի տոնը՝ նորոգված ժամանակի մեջ: Ժամանակը ըմբռնել դժվար է, բայց մենք այն ապրում ենք: Եվ կյարելի է այն լցնել մեր մտածուներով, մեր զգացուներով, մեր գործերով: «Գենեցեք զժամանակս», —թելադրում է Պողոս առարիարը: Մարդու գերազույն կոչումն է՝ ժամանակի և կյանքի մատյանը լցնել աստվածահան գործերով, ժողովրդանելք, մարդասիրական ազնիվ աշխատանքներով:

Կարևոր ոչ թե ժամանակի ընթացքն է մարդու մեջ, այլ կյանքի ու մարդու հառաջընթացը, զարգացումը, կատարելագործումը անփոփոխ և հավերժական ժամանակի մեջ:

Այս մտածուների լոյսի տակ, քրիստութեանան մտածողության համար, երբեք պատահականություն չէ ամանորի և Ս. Ծննդյան տոների այս հաջորդականությունը, ժամանակի և կյանքի միջև այս աղերսը:

Նոր տարվա առաջին և մեծագույն տոնը Քրիստոսի ծննդյան տոնն է՝ վերանորոգված, պալճառացած, «աստեղ կենաքի» տոնը, որը մի տեսակ սրբագին կրոշ է կամ ազդարարություն՝ ուղղված քրիստոնյա աշխարհին, համականության համար, թե մարդի ի՞նչ կերպով, ինչպիսի ներշնչումներով և ի՞նչ պարտականությունների կատարումով

պիտի կարենան արժեքավորել իրենց ժամանակն ու կյանքը:

Ահա այսպիսի սրտագին խոհերով և զգացմունքներով, քրիստոնեական վառ հավատքով է դիմավորում մեր եկեղեցին Նոր տարին թէ՛ Մայր հայրենիքում և թէ՛ սիրութի բոլոր հորիզոնների տակ:

Սեր եկեղեցու, մեր հայրենիքի և մեր ծողովոյի համար բոլորվեց հովում, աշխատանքով ու սիրագործություններով հարուստ մի տարի:

Հայ ժողովորդն իր վերածնված Մայր հայրենիքում, իր հայրենի սրբազն նոյն վրա, իր հարազատ պետականության ազատության պահպան պայմաններու նոր տարին դիմավորում է արդար հոգարտությամբ, ատեղծագործ ու խաղաղ աշխատանքի պայմաններում, բառացիորեն հրաշքի հավասար վիճակի փոփոխություններու, նվաճումներ արձանագրելով հայ մշակույթի, արվեստի, գիտության, գրականության, ժողովրդական տնտեսության, լուսավորության, սոցապահության, գյուղատնտեսության բնագավառներու հայ ծողովորդի հոգևոր նոր կյանքի կերտման ասպարեզում:

Չեոք թերված այս հոգևոր, նյութական նվաճումներն է՛լ ավելի ամրապնդում են մեր հայրենիքի հզորությունը:

«Թոռ խաղաղության մեջ աճի ու զորանաշխարար ծողովորդը մեր և նոր իրազործութերով ու նվաճումներով հարստացնե, լուսավորե և գեղեցկացնե Մայր երկիրը մեր Հայաստան աշխարհ, իրականացած երազը մեր լուսաբնակ համեմյաց», — բարեմարտում է Ազգին հայրենասեր Հայրապետը՝ Ս. Ծննդան իր պատրիս քարոզի մեջ:

Հայոց Հայրապետի սուրբ շրթներով ճշշմարտությունն է խոստ:

Արդարն, պայօք մենք, որպես եկեղեցի և ժողովորդ, կարիք ունենք խաղաղության, ենքին համերաշխության: Խաղաղության պայմաններում միայն կարող ենք զարգացնել ու պահել, ինչ ստեղծել ենք դարերի ընթացքում և վերշնի բառանախակին: Մեր ժողովորդը իր անցյալի տիտոր կյանքի փորձով հասկացել է իմաստը խաղաղության: Ահա թե ինչո՞ւ հայ պահ խաղաղության է ձգուում, իր ազգային-եկեղեցական կյանքում, և կանգնել է խաղաղաւեր ժողովորդների ընտանիքում, խաղաղության համար մղվող պաքարում:

Ազգային-եկեղեցական տեսակետից անցյալ տարին նոյնական եղավ իրադադա-

թյուններով հարուստ, արդյունավետ և նովետ հիշատակելի տարի:

Պետք է որպահպատճամք արձանագրել, Վեհափառ Հայրապետի անմիջական ղեկավարության ներք Մայր Աթոռում և մեր ներքին թեմերում խաղաղ ու սիրության պայմանների մեջ ընթացավ մեր եկեղեցներ կան-թեմական կյանքը:

Մայր Աթոռի միաբանությունն ու պաշտ ներկայութեա, Վեհափառ Հայրապետի աշխատա լուրջ հոկողության ներք, ծառայության ոգով և պատուանելու գգացմունքներով շարունակեցն կատարել իրենց նվիրակա պարտականությունները ապ սուրբ ու համագային հայսպատճառական առավել պատճառության և վայելչության համար:

Սիրություն նոյնական մեր ազգային-եկեղեցական կյանքը, Մայր Աթոռի օրինական ներք, բոլորեց խաղաղ և շինարար աշխատանքի մի տարի: Սիրությունը բոլոր հորիզոնների տակ հայ ժողովորդը բոլորված ի Մայր Եկեղեցու շուրջը, շարունակեց իր խաղաղ, օրինապահ և բնականու կյանքը՝ ծերացած իր նախնաց հավատությունների վրա:

Քրիստոնյա հայ մարդը ծնննեն է Ավետարանի:

Պատմության, ժամանակի և միջոցի մեջ մի անգամ ծնված Բանը, որ «մարդն եղի և բնակեա ի մեզ», ամեն օր կարող ծնվել մեր ազգային-եկեղեցական, բարոյական կյանքի մեջ, եթ գտնի մաքրու ու քարի, խաղաղ ու քաղցր մօնոնդութ մտուիր:

Իմաստություն ու նոգեկան արդիություն ունենակը ապ նոր տարիս մեջ համազգայի միացյալ ճգնաժողով մեկուղեկու մեր ուժերը ի պաշտպանություն Հայ Եկեղեցու միության և իրավանց ու համբավանդումն ափուուք հայության ազգապահականան սրբազն գործի, որը մեր օրերի մեծագույն հարցն է սիրութք բոլոր հորիզոնների տակ:

Ահա ապ խոներով ու խորիրածածություններով, հանուն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի, շնորհավորում ենք բունական հայության Նոր տարին և Փոլչի հրաշափան Ս. Ծննդան ստեղծ՝ շերտորեն աղոթերով, որ խաղաղություն լինի բոլոր հայ երդիկների տակ, մեր աղոթքի բոլոր տների մեջ ու բոլոր հայ սրտերում՝ ի փառ մեր եկեղեցու, մեր ժողովորդի և մեր վերածնված Մայր հայելների:

Շնորհավոր Նոր տարի և Ս. Ծննդան, սիրելի եղբարձուներ և բուրքեր:

